Ազգ
Azg
23 ՅՈՒՆՈՒԱՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 2(5086)
ISSN: 1829-1651

# Ադրբեջանը՝ միջազգայնորեն իրավազուրկ

**Ժամանակին, երբ հայտարարվեց Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման մասին, Ադրբեջանը սպառնալիքներ տեղաց՝ հիստերիան սառեցնելով, երբ միջազգային հանրությունը դեմ արտահայտվեց քաղաքացիական ինքնաթիռները խփելու այդ հայտարարություններին:**

**Ամերիկյան մամուլում Ջոշուա Կուչերան անդրադարձել է ադրբեջանական սպառնալիքներին, որոնք կրկին հնչեցվում են, երբ օդանավակայանի բացումը մոտ է: Կուչերան մեջ է բերում ադրբեջանական մամուլից հատվածներ, ըստ որոնց ինչ-որ անանուն աղբյուր հայտարարել է, թե իբր ադրբեջանական օդուժը վերահսկում է ողջ օդային տարածքը, ներառյալ նաեւ «գրավյալ տարածքները»: Ավելին, իբր ադրբեջանական բանակը պատրաստ է հակադարձելու «հակառակորդի յուրաքանչյուր փորձ»:**

**Այս ամենի ֆոնին ադրբեջանական անանուն աղբյուրները հայտարարում են, թե կկասեցնեն յուրաքանչյուր «չթույլատրված թռիչք»: Կուչերան ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ նախկին՝ «կկործանենք, կոչնչացնենք» բառերի փոխարեն ադրբեջանական այդպես էլ անանուն մնացող աղբյուրները այժմ ավելի զգույշ են արտահայտվում՝ օգտագործելով «կասեցնել, խափանել» բառը: «Եվ ավելի կարեւոր է, որ այդ հայտարարությունները չեն արվում հրապարակային կերպով, ինչին նույն կարգի միջազգային արձագանք չի լինում», նշում է հոդվածագիրը:**

**Հոդվածագրի կարծիքով, ակնհայտ է, որ քաղաքացիական ինքնաթիռներ խփելը Բաքվի հեղինակության համար աղետալի կլինի՝ հենց Ադրբեջանը դարձնելով միջազգայնորեն իրավազուրկ:**

**«Ուստի հստակ չէ, թե ինչի են ուզում նրանք հասնել անգամ թաքնված սպառնալիքներով», եզրակացնում է Ջոշուա Կուչերան:**

**Վ. Պ.**

# Նոր ժամանակների մատույցներում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Բանը բոլորովին էլ տարիքը չէ, բայց եւ, նախագահի թեկնածուներին նայելով՝ որոշ դեպքերում արխաիզմի զգացումը չի լքում հայ ընտրողին: Թվում է, թե դեռեւս 2008 թվի մեջ ենք կամ ավելի վաղուցվա, ու նույնիսկ 1995-96-ի՝ «Հայրիկյան, նախագահ», ու չկա գիտակցությունը, որ ժամանակ է փոխվել, որ ամեն ժամանակ իր պահանջներն է դնում (մարդկանց փառավոր կենսագրությունը հարգելով ենք սա ասում): Արդի ժամանակը պահանջ ունի նոր տիպի մտածողների, ասենք՝ փաստաբան Վահե Գրիգորյանի տիպի, առանց պոպուլիզմի ու իր գործն անող, ու ամենակարեւորը՝ երկրի, հայրենիքի զգացողությունը ոչ թե լեզվի վրա, այլ շատ խորքերում: Սակայն ունենք այն, ինչ ունենք, ու Սերժ Սարգսյանի առաքելությունը գուցե հենց նա պիտի լինի, որ այս անգամ եւս նախագահ դառնալով՝ հասարակությանը հետագայում պատրաստի նոր տիպի ղեկավարներ ունենալու մտայնությանը ու այդպես մնա նաեւ պատմության մեջ:

Բոլոր դեպքերում ամեն ինչից երեւում է, որ քարոզարշավի ընթացքում երկրի գործող նախագահը խնդիրներ չի ունենա, քանի որ առանձնապես ընդդիմախոս մրցակից չունի, ու երկրորդ-երրորդ տեղերի համար պայքարի մասին խոսակցությունները անլուրջ են: Սակայն երկրի խնդիրներն այնքան շատ են, որ եթե անգամ հատուկ քարոզարշավ չկազմակերպեն գործող նախագահի կողմնակիցները, այլ ամեն անգամ որեւէ ոլորտից տուժածների հետ սովորական, հանպատրաստից հանդիպումներ ունենա նա (ասենք՝ մի անգամ՝ դատական համակարգից տուժածներ, մի անգամ՝ անտուններ, մի անգամ՝ հարկային նոր մամլիչի տակ հայտնվելիք ստոմատոլոգներ, մի անգամ՝ բանակում որդի կորցրած մայրեր եւ այլն), նախագահը ոչ մի խնդիր չի ունենա հանդիպումների մարդաշատության տեսակետից: Բայց եւ՝ այնքան խոստումներ պետք է ստիպված տա, որոնք հետո հարկ է կատարել, որ պարզապես նախագահի ընտրվելուց հետո առհասարակ քննելու ժամանակ չի ունենա ընտրարշավի ընթացքում վեր հանված պրոբլեմներն ուսումնասիրելու եւ դրանց լուծում տալու առումով:

Սակայն ավազի միջից դուրս հանենք քարերը, այն է՝ ապագա նախագահին ուղղված իրական պահանջները, որոնք բյուրեղացրել է հասարակությունը քաղաքական ուժերի հետ տարիներ ու հատկապես վերջին շրջանում տալ-առնելուց հետո: *Տես էջ 3*

# 60 հազար դրամ արտոնագրային վճարներից դժգոհում են անշարժ գույքի գործակալությունները




**Հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Արտոնագրային վճարների մասին» օրենքում փոփոխությունները դժգոհություն են առաջացրել նաեւ անշարժ գույքի գործակալությունների ներկայացուցիչների մեջ: Ըստ այդ օրենքի՝ այդ գործունեության համար արտոնագրային վճար վճարողները, անկախ գործունեության արդյունքներից, գրանցված յուրաքանչյուր աշխատողի համար ամսական պետք է վճարեն 60 հազար դրամ Երեւանում եւ 10-50 հազար դրամ մարզերում: Այդ կապակցությամբ երեկ հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ Անշարժ գույքի բորսայի տնօրեն Արտյոմ Պրիբլինսկին հայտարարեց, որ մոտ 200 գործակալություններում աշխատում է միջին հաշվով 10 մարդ: Այսինքն, ամսական գործակալությունը ստիպված է լինելու մոտ 600 հազար դրամ վճարել՝ անկախ գործունեության արդյունքներից: Նրա կարծիքով, դա կարող է ստիպել գործակալություններին մտնել ստվերային դաշտ, քանի որ անշարժ գույքի շուկայի համար լավ ժամանակներ չեն:**

**Տեղեկացնենք, որ Հայաստանի Ռիելթորների եւ գնահատողների միության եւ անշարժ գույքի գործակալությունների ղեկավարների կողմից ստեղծվել է Հայաստանի Ռիելթորների հասարակական նախաձեռնություն՝ «60.000-ին դեմ»: Նրանք բաց նամակ են հղել նախագահին, վարչապետին, ֆինանսների նախարարին, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին, որտեղ նշվում է, որ այս փոփոխությունն անելիս հաշվի չեն առնվել ոլորտում տիրող իրավիճակը, տնտեսվարող սուբյեկտների կարծիքները, չեն եղել հասարակական քննարկումներ, համապատասխան գերատեսչությունները մինչ այժմ չեն տվել բացատրություններ, տնտեսագիտական լուրջ հիմնավորումներ, թե ինչ հաշվարկներից ու վերլուծությունից ելնելով է հարկման տվյալ դաշտ բերվել մի ամբողջ բնագավառ, որն ուղղակի գոյատեւում է շուկայի արդեն մի քանի տարի շարունակվող ճգնաժամի պայմաններում: Ելնելով դրանից՝ անշարժ գույքի շուկայի մասնակիցները անընդունելի ու չհիմնավորված են համարում սույն օրենքով սահմանված դրույքաչափերը եւ առաջարկում են իրենց գործունեությունը ներառել շրջանառության հարկով հարկման դաշտում:**

**Խնդրի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով դիմեցինք ֆինանսների նախարարություն, որտեղից, սակայն, մեզ պատասխանեցին, որ դրանք կտրվեն առաջիկա օրերին:**

**Ա. Մ.**

# «Թուրքիան ահաբեկչական պետություն է»

Այս խոսքերը պատկանում են Սիրիայի նախագահ **Բաշար Ասադին**: Նա դրանք, ըստ թուրքական էլեկտրոնային մամուլի, ասել է հունվարի 21-ին «Իրան» գործակալությանը տված հարցազրույցում, որտեղ Սիրիայում տեղի ունեցող քաղաքական զարգացումները համարել է ոչ թե «Արաբական գարնան» հետեւանք, այլ ահաբեկչության արդյունք:

Այնուհետեւ նախագահ Ասադը շարունակել է. «Բոլորն սպասում են, որ Սիրիայում ծավալվող պատերազմը վերջ գտնի մի քանի շաբաթվա, օրվա, նույնիսկ ժամվա ընթացքում: Սակայն այս կարգի ցանկությունները իրատեսական չեն: Մենք ներքաշվել ենք միջազգային պատերազմի մեջ: Դա ավարտին հասցնելու համար ժամանակ է հարկավոր: Թուրքիան որպես ահաբեկչական պետություն պատասխանատու է Սիրիայում իրականացվող արյունահեղության համար: Սակայն թուրք ժողովուրդը ճգնաժամի առաջին իսկ օրից եղել է մեր կողքին: Մնայունը ժողովուրդներն են, իսկ կառավարությունները՝ անցողիկ»:

**Հ. Չ.**

# «Ինքնաքննադատությունը նաեւ հայերին է պետք»



Հունվարի 19-ին լրացավ մեր հայրենակից Հրանտ Դինքի սպանության 6-րդ տարին: Տարելիցի առթիվ թուրքական «Բուգյուն» հեռուստատեսությունը հրավիրել էր «Ակօսի» ներկա խմբագրապետ **Ռոբեր Քոփթաշին**՝ մասնակցելու Էրքամ Թուֆանի «Վերլուծություն» ծրագրին: Ինչպես հունվարի 21-ին վկայել էր Rotahaber.com-ը, հաղորդմանը Թուֆանի հարցերին պատասխանելիս Քոփթաշն ասել է. «Իմ կարծիքով, ինքնաքննադատությունը հարկավոր է բոլորին: Դա միայն թուրքերին չի վերաբերում: Ճիշտ չէ զուտ թուրքական կողմից սպասելը: Ճշմարտության բացահայտումը բոլորի պարտքն է: Եթե դուք ճիշտ եք ապրել, իսկ ձեր դիմացինը, լինելով դրա պատասխանատուն, շարունակ մերժում է իր արարքը, այդ դեպքում ակամա դիմացինին մեղադրող հոգեվիճակում ես հայտնվում, եւ ինքդ քեզ «որտե՞ղ եմ սխալ գործել» հարցն ուղղելու կարիքը շատ չես զգում: Ես ամեն անգամ ե՛ւ հայերին, ե՛ւ թուրքերին ասում եմ, որ հարկավոր է համբերատար լինել: Հետեւաբար թուրքերն էլ հայերի հանդեպ պետք է համբերատարություն դրսեւորեն: Քանի որ թուրքերը դեռեւս եզրակացության չեն եկել 1915-ի առնչությամբ, ուստի հայերը չեն փոխում իրենց դիրքորոշումը: Նրանք տուժող կողմի կարգավիճակից բխող իրավացիության զգացումով մտածում են, որ ինքնաքննադատության կարիքը չունեն, ինչը չպետք է այդպես լինի, որովհետեւ կարող են սխալներ գործել նաեւ տուժածները»:

**Հ. Չ.**

## Ընթացիկ

Երուսաղէմի հայոց Սրբոց Յակոբեանց միաբանները այսօր՝ յունուար 23-ին, պիտի հաւաքուին եւ ընտրեն իրենց նոր առաջնորդը՝ Հայ Երուսաղէմի պատրիարքը: Թորգոմ պատրիարք վախճանեցաւ անցեալ տարի հոկտեմբեր 12-ին, 93 տարեկանին, եւ միաբանները տեղապահ ընտրեցին 78-ամեայ Արիս արք. Շիրվանեանը: Թորգոմ արք. Մանուկեան ընտրուած էր մարտ 22, 1990-ին, դառնալով 96-րդ պատրիարքը Առաքելական Սուրբ աթոռին:

Նոր պատրիարք կրնայ ընտրուիլ ոեւէ միաբան, որ ծայրագոյն վարդապետի աստիճանին հասած կամ եպիսկոպոսացած եւ 35 տարիքը անցած է: Ըստ մեզի հասած տեղեկութիւններուն, արդէն չորս միաբան հայրեր պատրաստ են դնելու իրենց թեկնածութիւնը:

Այդ չորսէն մէկուն՝ Բաբգէն ծ. վրդ. Անուշեանի հետ արդէն ունեցած ենք առանձին հարցազրոյց, որ արդէն լոյս տեսաւ «**Ազգի**» էջերուն եւ կայքէջերի սիւնակներուն վրայ:

Այժմ թուղթին կը յանձնենք երկրորդ թեկնածուին՝ Վիգէն արք. Այքազեանի մասին ամփոփ տեղեկագրութիւն մը, վեր հանելու անոր արժանիքները որպէս մարդ ու եկեղեցական:

# Պատրիարքական աթոռի գլխավոր հավակնորդը

## *Վիգէն արք. Այքազեան*

Վիգէն սրբազան ծնած է Սղերդ, Թուրքիա, 1950-ին, եւ փոքր տարիքին մեկնած է Երուսաղէմ, ուր ուսանած եւ աւարտած է Ընծայարանի բաժինը եւ 1968-ին ձեռնադրուած է սարկաւագ: 1971-ին ընդունած է դառնալ կուսակրօն քահանայ եւ ձեռնադրուած է աբեղայ, օրուան պատրիարք Եղիշէ արք. Տէրտէրեանի գահակալութեան շրջանին: Այդ տարուան հունձքը բարեբեր եղաւ Հայաստանեայց եկեղեցւոյ համար՝ Խաժակ արք. Պարսամեան՝ Առաջնորդ Ամերիկայի հայոց Արեւելեան թեմի, Գիսակ արք. Մուրադեան՝ Առաջնորդ Արժանթինի հայոց, Նուրհան արք. Մանուկեան՝ լուսարարապետ Երուսաղէմի վանքին եւ Վիգէն արք. Այքազեան:

Վիգէն վարդապետ կը ձեռնադրուի եպիսկոպոս 1971-ին, Ս. Էջմիածնի մէջ, ձեռամբ Վազգէն Ա. Ամենայն հայոց կաթողիկոսին: Անոր ծառայութիւնը եղաւ երկու դաշտերու վրայ: Երկուքն ալ ընդարձակ եւ ծանրաբեռնեալ:

Նախ հայկական համայնքներէն ներս: 1972-1974 տարիներուն թարգմանն էր Երուսաղէմի պատրիարքութեան: 1975-1976-ին որպէս քարոզիչ կը ծառայէ Պոլսոյ հայոց պատրիարքութեան եկեղեցիներուն մէջ, դառնալով՝ օգնականը Շնորհք պատրիարք Գալուստեանի: Այնուհետեւ կը նշանակուի հովիւ Զուիցերիոյ հայ գաղութին: 1980-1992 տարիներուն կը կազմակերպէ, բացի Ժընեւէն, Զիւրիխի, Բեռնի, Քրիզլինգի եւ Լուգանոյի հայկական համայնքները: Նորակազմ Զուիցերիոյ Հայոց թեմէն ներս կը նշանակուի առաջին առաջնորդը, պաշտօն՝ զոր կը վարէ 1992-1996 տարիներուն:

1997-ին, Ամերիկայի հայոց առաջնորդարանը իր նորաստեղծ Հայ օգնութեան Ֆոնդի գրասենեակի տնօրէն կը նշանակէ Վիգէն սրբազանը Լենինականի եւ Սպիտակի երկրաշարժի օրերուն: Ան կը վարէ այս պաշտօնը մինչեւ 1999 թուականը:

Խաժակ սրբազանին առաջնորդական պաշտօնին գալով, Վիգէն սրբազան կը նշանակուի Ուաշինգթընի մօտ առաջնորդական նուիրակ, պաշտօն՝ զոր տարիներ ամբողջ կատարած էր Բաբգէն եպս. Վարժապետեան:

Իսկ միջազգային գետնի վրայ եւս Այքազեան սրբազանը ունեցաւ ընդարձակ գործունէութիւն մը: 1985-էն սկսեալ արդէն սկսաւ ներկայացնել Ամենայն հայոց հայրապետութիւնը Համաշխարհային եկեղեցիներու խորհուրդին մօտ (World Council of Churches), վարելով դիւանական պաշտօններ:

1982-1992 տարիներուն մասնակցեցաւ Խորհուրդի ուղղափառ աշխատանքային պարտականութեան յանձնախումբին եւ 1991-1999 թուականներուն կարեւոր պաշտօնով մաս կազմեց Խորհուրդին «Առաքելութիւն եւ աւետարանչականութիւն» յանձնաժողովին: Մինչեւ այսօր ան մաս կը կազմէ Համաշխարհային եկեղեցիներու խորհուրդի գործադիր մարմնի դիւանին:

2007 թուականին ընտրուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու ազգային եկեղեցիներու խորհուրդի (National Council of Churches) նախագահ՝ 2008 եւ 2009 տարիներու համար, դառնալով առաջին արեւելեան ուղղափառ եկեղեցականը ստանձնելու այդ խիստ կարեւոր միջեկեղեցական պաշտօնը: Ըսենք որ Կաթոլիկ եկեղեցին մաս չի կազմեր այս Խորհուրդին, սակայն մաս կը կազմեն 37 տարբեր քրիստոնեայ յարանուանութիւններ, ինչպէս՝ աւետարանական, անգլիկան, բողոքական, ուղղափառ, պատմական Ափրիկեան-Ամերիկեան եւ այլ եկեղեցիներ ներկայացնելով 45 միլիոն ամերիկացիներ երկրի տարածքին վրայ՝ աւելի քան 100 հազար ծուխեր ներկայացնող:



Անշուշտ դիւրին չէր ամէն յարանուանութենէ, ցեղէ, լեզուէ, մտայնութիւններէ, արեւելումներէ եկած քրիստոնեաներու այս մէկտեղումին մէջ դրական աշխատանք տանիլ: Ի պատիւ Վիգէն սրբազանին պէտք է ըսել, որ ան արժեցուց իր պաշտօնը:

Ըսենք նաեւ, որ Սրբազանը իր դոկտորական աստիճանը ստացած է 1999-ին, Հայաստանի գիտութիւններու ակադեմիայի պատմութեան ինստիտուտէն: Իսկ ամբողջացուցած է իր ուսումը, հետեւելով Զուիցերիոյ Ֆրիբուրգ կաթոլիկ համալսարանի բարձրագոյն կրթութեան: Ունի նաեւ համալսարանական պսակաւոր աստիճան Լոնդոնի Քինկզ քոլէճէն: Հետեւած է հովուական աստուածաբանութեան Քենթըրբըրիի Սբ. Օգըսթին քոլէճի մէջ:

Անցեալ տարի մաս կազմեց Նիւ Եորքի մեր առաջնորդարանի կազմակերպած դէպի Պատմական Հայաստան կատարուած ուխտագնացութեան:

Յոգնիլ չգիտցող, ամէն տեղ հասնող եկեղեցականն է ան: Հաւատարիմ հոգեւորականը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի եւ աւանդապահը՝ Հայաստանեայց եկեղեցւոյ կարգ ու սարքին:

Իր հաղորդական բնաւորութեամբ՝ հեռու քինախնդրութիւններէ, վէճերէ, ըսի-ըսաւներէ՝ ան կը հաւատա՛յ գործին: Գործնական մարդն է մեր եկեղեցւոյ, առանց որ տուժէ իր հոգեւորականի կոչումը:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Եորք

*ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ*

# Չարաշահումների բացահայտմանը հաջորդող տեղեկությունները՝ www.e-gov.am կայքում

## *Պետական կառավարման համակարգում բարեփոխումների 3 նոր ուղղություններ*

Պետական կառավարման համակարգի գործունեության բարեփոխումների հերթական միջոցառումների մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց կառավարության աշխատակազմի ղեկավար **Դավիթ Սարգսյանը**: Նա մասնավորապես խոսեց 3 ուղղություններով ուժի մեջ մտած բարեփոխումների մասին: Ըստ կառավարության աշխատակազմի ղեկավարի, դրանք նպատակ ունեն բարձրացնել քաղաքացիների սպասարկման որակը, դյուրացնել մատուցվող ծառայությունները, կրճատել դրանց ժամկետները, բարձրացնել պետական կառույցների գործունեության թափանցիկությունը, կիրառել էլեկտրոնային կառավարման համակարգեր:

Առաջին ուղղությունը լիցենզավորվող գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց՝ լիցենզավորողին ներկայացվող հաշվետվություններին էր վերաբերում: Ներկայացվող հաշվետվությունները այսուհետեւ լիցենզավորված անձինք կարող են ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ օգտագործելով www.e-gov.am կայքում բացված «Լիցենզավորված անձանց հաշվետվությունները» բաժինը:

Դավիթ Սարգսյանը տեղեկացրեց, որ խոսքը վերաբերում է շուրջ 15 լիցենզավորվող գործունեության տեսակների, որոնց հաշվետվությունները ներկայացնելու համար այլեւս կարիք չի լինի այցելելու պետական մարմիններ: Դրանով կնվազի շփումը բիզնեսի եւ պետական պաշտոնյաների միջեւ, հետեւաբար կնվազեն նաեւ կոռուպցիոն ռիսկերը: Դրանք անվտանգության, առողջապահության, գյուղատնտեսության, կրթության, շրջակա միջավայրի պահպանության, տրանսպորտի, քաղաքաշինության, վիճակախաղերի եւ շահումով խաղերի գործունեության տեսակներն են, որոնք իրենց գործունեության մասին հաշվետվություններ են ներկայացնում առողջապահության, արտակարգ իրավիճակների, բնապահպանության, գյուղատնտեսության, էկոնոմիկայի, կրթության եւ գիտության, տրանսպորտի եւ կապի, քաղաքաշինության, ֆինանսների նախարարություններ:

Երկրորդ ուղղությունն առնչվում է պետական մարմինների գործունեության թափանցիկությանը: Կառավարության աշխատակազմի ղեկավարը հիշատակեց, որ հաճախ քննադատություններ են լինում, թե ՀՀ Վերահսկիչ պալատի բացահայտած չարաշահումների հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկություններ հնարավոր չի լինում ստանալ որեւէ աղբյուրից: Նա նշեց, որ այսուհետեւ դարձյալ www.e-gov.am կայքում (www.e-gov.am/control–chamber/) տեղադրվելու են Վերահսկիչ պալատի կողմից տարբեր պետական մարմիններում իրականացված վերահսկողության արդյունքները, նշվելու է, թե որքա՞ն գումարներ են վերականգնվել տվյալ պահին, ի՞նչ փոփոխություններ կլինեն առաջիկա ամիսներին, ի՞նչ փուլում են քննվող գործերը եւ այլն:

Երրորդ փոփոխությունը, որը սկսել է գործել կառավարության ընդունած որոշումներից հետո, վերաբերում է հյուպատոսական ծառայություններից տեղեկանքներ ստանալուն: Կառավարության աշխատակազմի ղեկավարը փաստեց, որ որեւէ երկրում ՀՀ քաղաքացիները մեր հյուպատոսական ծառայությունից տեղեկանք ստանալու համար ստիպված են լինում մի քաղաքից մեկ այլ քաղաք մեկնել, որտեղ գտնվում է ՀՀ հյուպատոսությունը, երբեմն կտրելով հազարավոր կիլոմետրեր: Փետրվարի 10-ից դրա անհրաժեշտությունն այլեւս չի լինելու:

Ընտանեկան կարգավիճակի, դատվածության եւ հետախուզման առկայության մասին տեղեկանքները, հյուպատոսական վավերացում ստացած պաշտոնական փաստաթղթերը, ՀՀ վերադարձի վկայականը՝ նրանց համար, ովքեր կորցրել են անձնագիրը կամ ճամփորդական փաստաթուղթը, կամ ժամկետանց են դրանք, կարող են ստանալ փոստի միջոցով՝ պատվիրված նամակով դիմելով ՀՀ դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչություններին կամ համապատասխան նախարարություններին: Դավիթ Սարգսյանի տեղեկացմամբ՝ գույքի վերաբերյալ տեղեկատվությունն էլ կարելի է ստանալ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակներից որեւէ մեկից՝ անկախ գույքի գտնվելու վայրից:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Սուր շնչառական վարակները չեն խանգարի դասերին

Սուր շնչառական վարակների համաճարակային իրավիճակը հանրապետությունում հանգիստ է, ու որեւէ լարվածություն, առավել եւս կրթական համակարգի վրա դրանց ազդեցության մասին ներկայումս խոսք չկա:

ԿԳՆ հասարակայնության հետ կապերի ու տեղեկատվության վարչության պետ **Արթուր Բաղդասարյանից** տեղեկացանք, որ հանրակրթական դպրոցներում դասերն արդեն վերսկսվել են: Ձմեռային արձակուրդը, որը մեկնարկել էր 2012-ի դեկտեմբերի 29-ից, ըստ 2012-2013 թվականների ուսարվա պլանի՝ 3-12-րդ դասարանցիների համար ավարտվել է այս տարվա հունվարի 13-ին, իսկ առաջին ու երկրորդ դասարանցիների ձմեռային արձակուրդը կտեւի մինչեւ հունվարի 27-ը:

Հանրապետությունում սուր շնչառական հիվանդությունների տարածվածությունը արդյոք կազդի՞ հանրակրթական դպրոցների աշխատանքի վրա: Արթուր Բաղդասարյանը պատասխանում է՝ այսօրվա դրությամբ դասերը դադարեցնելու հրահանգ կրթության ու գիտության նախարարությունը չի ստացել:

ԱՆ պետական հիգիենիկ ու հակահամաճարակային տեսչության վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժնի պետ **Լիլիթ Ավետիսյանը** տեղեկացնում է, որ անցյալ սեզոնի նույն շաբաթվա համեմատությամբ սուր շնչառական հիվանդություններից հիվանդացությունը նույնիսկ ավելի ցածր է: Իսկ ընդհանուր սեզոնային ցուցանիշը մնացել է գրեթե նույն մակարդակի վրա. 2011-2012 թվականների, այնպես էլ 2012-2013 թվականների միեւնույն ժամանակահատվածում գրիպի ու սուր շնչառական հիվանդություններով հիվանդացության մակարդակի աճ չի արձանագրվել:

Առողջապահության նախարարությունից տեղեկանում ենք, որ հարեւան Վրաստանում, Ադրբեջանում, Թուրքիայում, Ռուսաստանի Դաշնությունում նույնպես գրիպի ու սուր շնչառական վարակների համաճարակային իրավիճակը լարված չէ:

Լիլիթ Ավետիսյանը նշում է, որ սուր շնչառական հիվանդությունների նկատմամբ ավելի ընկալունակ են նրանք, ովքեր թույլ իմունիտետ ունեն՝ հիմնականում 65-ն անց տարեցներն ու մինչեւ 4 տարեկան երեխաները: Իսկ ընդհանրապես գրիպից կամ սուր շնչառական վարակներից խուսափելու համար մասնագետները հիշեցնում են, որ պետք է խուսափել հիվանդների հետ շփումից, հիվանդներն էլ հիվանդության ընթացքում պետք է տանը մնան, պառկեն, չնստեն տրանսպորտ ու չգտնվեն հասարակական վայրերում, հազալիս ու փռշտալիս դեմքը ծածկեն արմունկով: Սուր շնչառական վարակներից խուսափելու համար նաեւ հարկավոր է հաճախակի օդափոխել փակ տարածքները, հագնվել եղանակին համապատասխան եւ օգտագործել շատ հեղուկներ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԳ

# Անցուդարձ

# Չուտելը՝ պայքարի տարբերակ

*Նախագահի եւ 2 թեկնածու չեն բացառում հացադուլի դիմելը*

Նախագահի թեկնածու, ԱԻՄ առաջնորդ **Պարույր Հայրիկյանի** գնահատմամբ՝ որոշ թեկնածուներ խանդավառվել են նախագահ Սերժ Սարգսյանի խոստումներից եւ իրենք էլ սկսել են այնպիսի խոստումներ տալ, որոնք ոչ մի կապ չունեն նախագահի իրավասությունների եւ լիազորությունների հետ: Հայրիկյանը վստահ է՝ եթե նախագահն իր ասածները կարողանա կյանքի կոչել կառավարության եւ խորհրդարանի իր գործընկերների միջոցով, ապա մյուս թեկնածուները սեփական ծրագրերը պետք է իրականություն դարձնեն նույն այդ ուժերին հակադրվելու պայմաններում:

Հայրիկյանը նշում է, որ եթե Սերժ Սարգսյանն ինչ-որ բան ասի, նախաձեռնությամբ հանդես գա, ապա խորհրդարանական մեծամասնությունը կասի «այո», իսկ իր կամ մնացած թեկնածուների պարագայում խորհրդարանական մեծամասնությունը կխանգարի: Երկու օր առաջ Հայրիկյանը հանդիպել է ԵԱՀԿ պատվիրակության ղեկավար Հայդի Թագլիավինիին եւ հայտնել, որ որոշ թեկնածուների ցանկություններն ու իրական հնարավորություններն այնքան էլ համարժեք չեն: Թեպետ քարոզարշավը նոր է սկսվել, սակայն Հայրիկյանը բազմաթիվ զավեշտների է հանդիպել: «Ամենածիծաղելին այն է, երբ թեկնածուներին հարցնում են, թե ո՞ւմ են նշանակելու վարչապետ, անուն են տալիս ու նաեւ հայտարարում խորհրդարանն արձակելու մասին»: Հայրիկյանի գնահատմամբ՝ որոշ թեկնածուներ մտադիր են ընտրվելուց հետո դառնալ դիկտատոր:

Ի տարբերություն նրանց՝ ԱԻՄ առաջնորդն աշխատելու է բարոյա-քաղաքական լծակներով եւ նախագահ ընտրվելուց հետո խորհրդարանականներին արդեն նախագահի դիրքից է բացատրելու, որ իրենց իրավունքներն ու ծրագրերը զրո են, եթե կառույցը չի ապահովում մշտապես գործող ինքնորոշման իրավունքը: Հայրիկյանը բացասական չի գնահատում **Անդրիաս Ղուկասյանի** հայտարարած հացադուլը, ավելին, եթե զգա, որ նախաձեռնությունը լուրջ է, եւ Ղուկասյանը երկար ժամանակ շարունակի ծոմ պահել, ինքն էլ մի քանի օրով կմիանա եւ Ղուկասյանին կհամոզի հրաժարվել հացադուլից:

Արդեն երրորդ անգամ նախագահական ընտրություններին առաջադրված թեկնածու **Արամ Հարությունյանն** էլ է պատրաստվում հացադուլի: Փետրվարի 7-ին նա ԿԸՀ-ի դիմաց կսկսի հացադուլը, իսկ հաջորդ օրը՝ ցերեկը, ժամը 5-ին կհանի իր թեկնածությունը: Իր ծրագիրը մեկն է՝ այնպես անել, որ Սերժ Սարգսյանն ընտրություններին միայնակ մնա: Նրա գնահատմամբ՝ ովքեր ինքնաբացարկ կհայտարարեն ու չեն պայքարի ընտրություններին, անկախ թեկնածուներ են: «Թե ինչո՞ւ է առաջադրվել, եթե պետք է հրաժարվի», հարցին Հարությունյանը պատասխանում է՝ որպեսզի որեւէ մեկը չկասկածի, որ իրեն ինչ-որ մեկը կարող է ստիպել չառաջադրվել:

Հացադուլի չի պատրաստվում, սակայն կասեցնում է քարոզարշավի ընթացքն ու հայտարարում ինքնաբացարկ: ԼՂՀ նախկին արտգործնախարար **Արման Մելիքյանի** խոսքերով՝ նման որոշում է ընդունել, որովհետեւ ընտրությունների օրինաչափության խնդիրը լուծված չէ, արդար ընտրություններ անցկացնելու նախադրյալներ չկան:




Նախագահի թեկնածու **Րաֆֆի Հովհաննիսյանն** էլ այցելել է Անդրիաս Ղուկասյանին, ողջունել նրա որոշումը, սակայն հացադուլ անելու կամ ինքնաբացարկ հայտնելու որոշում «Ժառանգություն»-ում դեռ չեն կայացրել: «Հնարավոր է»: Սա «Ժառանգության» առաջնորդի կարգախոսն է, կուսակցության փոխնախագահ **Արմեն Մարտիրոսյանը** հավաստիացնում է, որ առաջին անգամ է, երբ նախագահական ընտրություններում առկա է իրական գաղափարական այլընտրանք, ժառանգականները հավատում են հաղթանակին ու մտադիր են մինչեւ վերջ պայքարել:

Մարզից մարզ, գյուղից գյուղ: Հենց այսպես է իր քարոզարշավը պատկերացնում ՀՀ նախկին վարչապետ **Հրանտ Բագրատյանը**: Հացադուլի նստելու ցանկություն այս թեկնածուն չունի, հավատում է հաղթանակին եւ հույս ունի, որ ընդդիմադիր զանգվածի ձայներն ինքն է ստանալու: Քարոզարշավին զուգահեռ երեկ կայացել է Հրանտ Բագրատյանի եւ Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպան Քեթի Լիչի հանդիպումը: Բագրատյանի նախընտրական շտաբից հայտնում են, որ հանդիպումը կայացել է դեսպանի նախաձեռնությամբ: Բագրատյանը ներկայացրել է իր նախընտրական ծրագիրը, քարոզարշավի ընթացքը, իշխանությունների պահվածքն ու ընտրացուցակների խնդիրը: Բագրատյանը մանրամասն ներկայացրել է, թե ինչպես կարելի է 100 քայլով երկրում արմատապես փոխել իրավիճակը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հ. Գ. Հացադուլ եւ ինքնաբացարկ հայտարարող թեկնածուներին հիշեցնում ենք, որ նախագահի թեկնածուն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ, մինչեւ ժամը 18:00-ն, դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունի հանելու իր թեկնածությունը: Ինքնաբացարկի դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է հանձնաժողովի նիստում: Ինքնաբացարկի դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թեկնածուի գրանցումը ճանաչում է ուժը կորցրած, իսկ թեկնածուն պարտավոր է հատուցել իր նախընտրական քարոզչության համար պետության կատարած ծախսերը:**

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

# «Տաշիրն» այս տարի եւս մի շարք ծրագրեր կիրականացնի

2013 թվականին եւս, ինչպես նախորդ տարիներին, «Տաշիր» բարեգործական հիմնադրամը, Կարեն եւ Սամվել Կարապետյանների ղեկավարությամբ, կիրականացնի մի շարք մեծածավալ ծրագրեր: Հիմնադրամը ձեռնպահ է մնալու մասնավոր, անհատական դիմումներին ընթացք տալուց՝ գործունեության հիմքում ունենալով բացառապես համակարգված, ծրագրային աջակցությունների ու խրախուսանքների մեխանիզմը: Նման որոշում է կայացվել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի երեկ կայացած նիստում, որը վարել է հոգաբարձուների խորհրդի նախագահ, ԱԺ պատգամավոր **Կարեն Կարապետյանը**:

Նիստում հաստատվել են ընթացիկ տարվա աշխատանքների մեխանիզմները: Մասնավորապես, շարունակվելու են աջակցություններն ու խրախուսանքները տարբեր թիրախային խմբերին՝ հստակ ժամանակացույցով իրականացվելիք ծրագրերի շրջանակներում: Բոլոր ծրագրերը նախապես կքննարկվեն եւ կհաստատվեն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերում, որից հետո անմիջապես դրանց մասին պատշաճ կարգով կիրազեկվի հանրությունը: Ծրագրերը հաստատվելու են հստակ ամրագրված չափանիշների, առաջին հերթին՝ օբյեկտիվության եւ առաջնայնության նկատառումներով՝ ընդգրկելով այն ոլորտներն ու թիրախային խմբերը, որտեղ մեր պետության հնարավորությունները դեռեւս լիարժեքորեն բավարար չեն:

**«Տաշիր» բարեգործական հիմնադրամի մամուլի ծառայություն**

## Ցավակցություն

Բեյրութում հրատարակվող «Զարթօնք» օրաթերթից ցավով տեղեկացանք նվիրյալ ուսուցիչ, կրթական գործի կազմակերպիչ **Լենա Գյոքճյան-Փոշողլյանի** կանխահաս մահվան մասին: Նա ուսումն առել էր Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունում, ապա հայագիտական բարձրագույն ուսում ստացել Երեւանի պետհամալսարանում: Վերադառնալով Բեյրութ՝ աշխատել է Վ. Թեքեյան վարժարանում, ապա՝ Մելգոնյան վարժարանում, իսկ վերջինիս փակվելուց հետո՝ Նիկոսիայի Նարեկ ազգային վարժարանում: Ամուսնացած էր նույնպես կրթական մշակ, հրապարակագիր, Բեյրութի «Արարատ» օրաթերթի նախկին խմբագիր Ավետիս Փոշողլյանի (Ավետիս Ռազմիկ) հետ: Անդամ էր Ռամկավար Ազատական կուսակցության եւ Թեքեյան մշակութային միության:

Խորին ցավակցություններ ամուսնուն, մյուս հարազատներին եւ ընկերներին:

# Նոր ժամանակների մատույցներում

*1-ին էջից*

**Վերջին շրջանի դիտարկումները ցույց տվեցին մի բան՝ որքան էլ վիճելի թվա, վերջանում է ընդհանրապես Հայաստանի երեք նախագահների ժամանակաշրջանը: Անգամ Ռոբերտ Քոչարյանն ակնակեց, որ չառաջադրվելով՝ չի ցանկացել մասնակցել իշխանության համար պայքար մղող երեք նախագահների՝ երկրի համար վնասակար ձեւաչափին: Սերժ Սարգսյանը, ուզում ենք, թե ոչ, կընտրվի նախագահ, սակայն խնդիրն այն է, որ Հայաստանի երեք նախագահներն ի վերջո հասկանան, որ այլեւս վերադարձի կամ իշխանություն փոխանցելու հնարավորություններ չեն լինելու հետագայում սոսկ այն պատճառով, որ մտածողություն ու սերունդ է փոխվում, համակարգն անցնում է անցյալի գիրկը: Ու իրենք պետք է թողնեն, որ ձեւավորվեն նոր իրողություններն ու դրանք կրողները:**

**Ռոբերտ Քոչարյանը, որքան էլ երիտասարդ թոշակառու, փառավորապես կառավարել է 10 տարի, դա մի ամբողջ կյանք է, նա մնացել է Հայաստանի պատմության մեջ, եւ իմաստ էլ չունի նրա վերադարձը հենց իսկ նրա համար (չնայած նրա վերջին հարցազրույցից երեւում է՝ նրա հայացքն ուղղված է հինգ տարի հետոյի նախագահական ընտրություններին), որովհետեւ առաջին նախագահի վերադարձի փորձն աչքի դեմ է. առաջինը եկավ, վերջնականապես վատնեց ունեցած ռեսուրսը եւ գնում է ոչնչով: Սակայն քաղաքական դաշտին առաջին նախագահի վերադարձի փորձը սպառնաց ամայացմամբ (իհարկե՝ իշխանության մասնակցությամբ, քանի որ իշխանության ջանքերն էլ ուղղված էին հնարավոր մրցակցին շարքից հանելուն): Հիմա նույնն ուզում է Ռոբերտ Քոչարյա՞նը: Հազիվ թե: Նրա պրագմատիզմն ունեցող մարդը ուրիշ հորինած հեծանիվի դասը հաշվի կառնի (ասածս բոլորովին չի նշանակում, որ նա չի կարող վերադառնալ երբեւէ՝ ասենք թեկուզ հենց վարչապետի տեսքով): Ժամանակը փոխվում է, եւ հենց սա պետք է ի վերջո ըմբռնեն երեք նախագահները: Վերադառնալով Սերժ Սարգսյանին, որին այժմ ոչ մի Ահարոն Ադիբեկյան էլ պետք չէ, հասկանալու համար, որ բոլոր սցենարներով ինքն ընտրվելու է, ապա նա եւս խնդիր ունի ընդունելու, որ Հայաստանի զարգացման համար պետք է թո՛ւյլ տալ, որ նոր գաղափարներ գեներացվեն: Խոսքը ոչ թե նշանակովի երիտասարդության ու նրա ձեռնաշարժերի մասին է, որն այժմ էլ անզեն աչքով երեւում է՝ հենց իշխանական բուրգում այդ նշանակովիները փորձում են ավագ սերնդի անպետքներին փոխել երիտասարդ սերնդի անպետքներով: Վերջին տեսակը պարզապես կկործանի եղած արժեքների մնացորդները Հայաստանում, այդ թվում՝ ե՛ւ ավագ, ե՛ւ երիտասարդ սերնդի անպետքներին ու պիտանիներին միաժամանակ: Քվոտաների վերաբաժանմամբ նոր իրողությունների Հայաստան հնարավոր չէ կերտել: Նշանակովի կամ վերին բուրգին հարմար մարդկանցով նոր քաղաքական համակարգ հնարավոր չէ զարգացնել: Առանց կրթության, առանց իրենց ներում Հայաստանն ունեցողների հնարավոր չէ վաղվա օր կերտել: Միայն նյութական միջոցներ տիրապետողների որոշումներով ազգը կկորցնի կերպար ու ներուժ: Հարկավոր են իդեալ ունեցողների նոր սերունդներ, որքան էլ նրանց հետեւողականորեն ջարդել են: Ու դրանք փողոցներում բղավողները, կամ գեյերի իրավունքներից խոսողները չեն բնավ:**

**Հարկավոր է, որ որոշում կայացնողների խումբը հենց իր շահերից ելնելով դուրս գա իր սովորական գործելակերպից, թմրած մտածողության ստերեոտիպերից: Թույլ տա, հնարավորություն տա նորանոր շերտերի, ինտելեկտուալների՝ թաքնված եւ չերեւացող, բայց իրականում գոյություն ունեցող, ասպարեզ մտնել, իրավասություններ ստանձնել, վերջապես՝ դրամ վաստակել: Իսկ դա կարելի է անել միայն՝ զսպելով տգետ փողատերերին ու նրանց զավակներին, եւ նրանց դասին պատկանող, նրանց կողմից ամենուր խցկվող իդեալից զուրկ երիտասարդության փոխարեն իսկապես գիտելիքի հետեւից ընկածներին ու Հայաստանի ճակատագրով մտահոգներին թույլ տալ շնչել: Ինչպես որ պատերազմի ժամանակ ինքնաբերաբար առաջնորդի դերը իրականում քաջ ու հմուտ մարդիկ են ստանձնում, այլապես պատերազմը թշնամուն տանուլ տալու վտանգ կա, հիմա էլ մենք պետք է պատերազմի մեջ լինենք տգիտության, շփացածության, կլանային գործունեության դեմ՝ Հայաստանի ապագան փրկելու համար, ու դա պետք է անել հմուտ թիավարմամբ: Ու այդ պատերազմում նույն կլանային մտածողության կրողները կարող են կործանել գաղափարն ու Հայաստանը: Ու, տարօրինակ չթվա, հենց նոր նախագահից է պահանջվելու մտածողություն փոխելու առաջին քայլերը, որ թերուսները ասպարեզը զիջեն նավը վարել իմացող հմուտներին՝ դանդաղորեն, բայց անխոտոր ընթացքով:**

**Սա անողը պատմության մեջ մնալու է որպես նոր ժամանակները նախապատրաստող մարդ, որպես ապագան նախապատրաստող մոդերատոր... եթե այս իրողություններն ըմբռնի, զոհ չգնա սեփական կլանին եւ սեփական կուսակցական նեղ շահին, եթե իսկապես ընկալի այն ողջ իսկայական վտանգը, որ գալիս է արդեն հայերիս վրա նոր ժամանակների մատույցներում: Եթե Սերժ Սարգսյանն ընտրվի՝ հայերը նրանից են սպասելու այդ դժվարին ու ազգի համար հրատապ որոշումները:**



# Զբոսաշրջությունը Արցախում

«Շուշվա» ընկերությունը, որի գործունեության ոլորտը հիմնականում զբոսաշրջությունն է, ստեղծված օրվանից ձեռնամուխ է եղել Արցախը տարբեր տեսանկյուններից հանրությանը ներկայացնելու գործին: «Շուշվա» ընկերությունը ցույց է տալիս Արցախի այն կողմերը, որոնք պատերազմի մասին հիշողությունների ու հակամարտության մասին խոսակցությունների ֆոնի վրա մղվել են երկրորդական ու երրորդական պլան: Խոսքը Արցախի մշակութային ժառանգության մասին է, բնության գեղեցկության, արցախցու ավանդույթների, ծեսերի մասին:

«Զբոսաշրջության համար Արցախն ունի բավականաչափ ներուժ, հետեւաբար իրավունք չունենք չօգտվելու այդ հնարավորությունից», ասում է «Շուշվա» զբոսաշրջային ընկերության համահիմնադիր, տնօրեն **Առնակ Ավետիքյանը** (մյուս համահիմնադիրը Գագիկ Մարտիրոսյանն է):



«Շուշվա» ՍՊԸ-ն Արցախում զբաղվում է ներգնա զբոսաշրջությամբ ու դրա զարգացմամբ: Թեեւ Լեռնային Ղարաբաղի կառավարությանն առընթեր կա զբոսաշրջության վարչություն, որը զբաղվում է ոլորտի զարգացմամբ, այնուամենայնիվ «Շուշվա» ընկերությունն էլ իր հերթին ձգտում է զբոսաշրջության զարգացման մեջ իր լուման ներդնել:

«Շուշվա» ընկերությունը, որը գործում է հենց Շուշիում, հիմնվել է 2012-ի մայիսի 15-ին, եւ արդեն ունի զբոսաշրջային տարբեր փաթեթներ՝ էկոտուրիզմի, կրոնական-եկեղեցական տուրիզմի համար, ունի գինու տուրերի փաթեթներ: «Ուզում ենք ապագայում կենտրոնանալ նաեւ գեոտուրիզմի վրա», նշում է տնօրենը՝ բացատրելով, որ գեոտուրիզմն ունի բավականին լայն շրջանակ. «Հետեւաբար ուզում ենք ստեղծել գեոտուրիզմի այնպիսի փաթեթ, որը կառնչվի բնությանը, կենդանական աշխարհին, մշակութային ժառանգությանը, ազգագրությանը եւ այլն»: Նա ընդգծում է նաեւ կարեւոր այն հանգամանքը, որ զբոսաշրջության մի ճյուղի զարգացումը կհանգեցնի մյուս ճյուղերի զարգացմանը, որովհետեւ զբոսաշրջության ճյուղերն իրականում շաղկապված են:

Ընկերության հետագա ծրագրերից մեկն էլ պատրաստումն է այնպիսի փաթեթների, որոնք կառնչվեն հայ դասականների՝ Արցախի մասին գրած վեպերին: Այսինքն՝ զբոսաշրջային տուրերի միջոցով Արցախին վերաբերող վեպերը կդառնան ավելի ճանաչելի. ի դեպ, զբոսաշրջային այցերը կկազմակերպվեն այն վայրերում, որոնց մասին հայ դասականները հիշատակել են:

Կրկին խոսելով զբոսաշրջության համար անհրաժեշտ ներուժից, որն այսօր ունի Արցախը, զրուցակիցս շեշտում է՝ ճոխ հյուրանոցներ, շռայլություններ Արցախը զբոսաշրջիկին առայժմ խոստանալ չի կարող, բայց կարող է խոստանալ անմոռանալի էկոտուրիզմ, որը մարդուն հնարավորություն է տալիս մոտենալու բնությանը: «Շուշվայի» էկոտուրերը ընդգրկում են նաեւ Արցախի գյուղական տները, որոնք պատրաստ են հյուրընկալելու զբոսաշրջիկներին: Գյուղական տների միջոցով զբոսաշրջիկները ծանոթանում են Արցախի տոհմական խոհանոցին, ժողովրդի ավանդույթներին, ծեսերին եւ այլն:

«Շուշվայի» տնօրենը պատմում է՝ էկոտուրերին մասնակից զբոսաշրջիկները նույնիսկ զարմանում են, որ Արցախում ներքին կյանքը խաղաղ է, մինչդեռ զանգվածային լրատվամիջոցներից նրանք հիմնականում տեղեկանում են միայն Ղարաբաղյան կոնֆլիկտի ու հակամարտության մասին: Իրականում Արցախի բնակչությունն ապրում է իր առօրյա գործերով, աշխատում է, արարում: Իհարկե, Ադրբեջանի հետ շփման գծում կրակոցներ լինում են, սակայն ժողովրդի ներքին կյանքում անդորր է: Իսկ պատերազմի մասին խոսակցություններն ու Արցախը միայն հակամարտության տեսանկյունից ներկայացնելը խոչընդոտում է զբոսաշրջության զարգացմանը եւ խանգարում, որ օտարերկրացին Արցախի մասին ճիշտ պատկերացում կազմի: Այնուամենայնիվ, ելնելով իր ընկերության փորձից՝ Առնակ Ավետիքյանը նշում է՝ որպես զբոսաշրջային վայր Արցախն ավելի հետաքրքրում է օտարերկրացիներին, քան հայաստանցիներին: Օրինակ՝ միայն ամռան ամիսներին «Շուշվան» ունեցել է զբոսաշրջիկների 4 խումբ՝ շուրջ 85 հոգի, որոնք բոլորը եղել են բացառապես օտարերկրացիներ: Ընկերության փաթեթներից օգտվողների թիվը դեռեւս շատ չէ, ինչը պայմանավորված է նաեւ «Շուշվայի» դեռ ձեւավորման ընթացքով: Ինչեւէ, տնօրենը հուսով է, որ 2013-ին զբոսաշրջիկները կլինեն ավելի շատ:

## Մշակութային ծրագրերը

Զբոսաշրջությանը զուգահեռ ընկերությունը զբաղվում է նաեւ մշակութային ծրագրերով եւ մշակութային միջոցառումների կազմակերպմամբ: 2012-ին Շուշիում արդեն կազմակերպել է ֆոտոլրագրող Ռուբեն Մանգասարյանի լուսանկարների ցուցահանդեսը եւ նկարիչ Սուքիաս Թորոսյանի՝ հայոց գրատպության 500-ամյակին նվիրված նկարների ցուցադրությունը: Իսկ առաջիկայում «Շուշվան» պատրաստվում է Արցախում իրականացնել գրաֆիկական վեպերի ծրագիր, որն առաջին հերթին նախատեսում է անցկացնել վարպետության դասեր Արցախի նկարիչների հետ, ապա երբ եկող տարվա մայիսին Երեւանում անցկացվի գրաֆիկական վեպերի միջազգային փառատոնը, դրան կմասնակցեն նկարիչներ նաեւ Արցախից: Արցախի նկարիչներից երկու լավագույն գործերի հեղինակներին կընձեռվի հնարավորություն մեկ տարի աշխատելու Ֆրանսիայում: Լավագույն երկու նկարիչներին նաեւ կտրվի հնարավորություն հրատարակելու իրենց գրաֆիկական վեպերը:

Գրաֆիկական վեպը մեզանում լայն տարածում չունի, մինչդեռ եթե ճիշտ օգտագործվեն հնարավորությունները, կարելի է հաջողությունների հասնել տարբեր ոլորտներում՝ այդ թվում եւ զբոսաշրջության: Գրաֆիկական վեպը նկարների միջոցով ցույց է տալիս որեւէ պատմության դրվագները, նկարներին զուգահեռ կարող է ներառել նաեւ կարճ երկխոսություններ, իսկ թեմաները բազմազան են:

«Գրաֆիկական վեպերի շնորհիվ կարող ենք ավելի ճանաչելի դարձնել Արցախը: Կարող ենք վերցնել Արցախի մասին տարբեր պատմություններ ու ներկայացնել դրանք հենց այդ միջոցով: Իսկ հետագայում Շուշիում միգուցե կարողանանք բացել գրաֆիկական վեպերի դպրոց, մի բան, որը Հայաստանում ու շատ երկրներում դեռեւս չկա», հավելում է Ա. Ավետիքյանը:

Արցախում գրաֆիկական վեպերի ծրագրի իրականացմանը «Շուշվան» կցուցաբերի իր ֆինանսական աջակցությունը, նաեւ կմասնակցի կազմակերպչական աշխատանքներին: Իսկ ծրագրի ընթացքը կլուսաբանվի ընկերության shushva.com կայքում:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Երիտասարդությունը Արցախի ճակատագիրն է

***Ստորեւ թարգմանաբար (քաղվածաբար) ներկայացվող հոդվածը Դերբիից (Միացյալ Թագավորություն) անկախ լուսանկարիչ եւ գրող Ռասել Պոլարի վերջերս Արցախ կատարած այցելության արդյունքն է:***

Որեւէ երկրի երիտասարդությունը նրա կենսատու աղբյուրն է, սնուցող արյունը: Առավել եւս՝ Արցախի համար: Հիշում եմ, տարիներ առաջ, երբ այցելեցի Շուշի... տխրությամբ էի շրջում փողոցներով՝ լուսանկարչական ապարատը ուսիցս կախված, եւ դիտում հին համալսարանից մնացած կիսափլված կարկասը: Պատկերացնում էի, թե ինչ աշխույժ պետք է եղած լինեին դասասենյակներն ու միջանցքները ուսանողական եռուզեռով:

Ի հակադրություն դրան, այս վերջին այցելության ժամանակ մուտք գործեցի Ստեփանակերտի պետական համալսարանը, մի տպավորիչ հաստատություն, հետաքրքրական պատմությամբ, եւ ականատես եղա, թե ինչ ներդրումներ էր կատարում կառավարությունը կրթության ոլորտում... Զարմացա, երբ համալսարանի ռեկտոր Ստեփան Դադյանի հետ հանդիպումից պարզեցի, որ հակառակ Արցախի դեռեւս չճանաչված լինելու հանգամանքին, համալսարանի որակավորումները ճանաչված էին միջազգայնորեն՝ Բոլոնիայի պայմանագրի դրույթներով եւ ուսանողները կարող էին այլ կրթական հաստատությունների հետ համագործակցել: (Սա նման է միջազգային հանրության կողմից Արցախը որպես անկախ ինքնություն ճանաչելու փոքրիկ մի քայլի): Ռեկտորի եւ այլ պաշտոնատար անձանց (Արզիկ Մխիթարյանի, Ռուդոլֆ Իսրայելյանի, Գագիկ Բաղունցի եւ Վալերի Ավանեսյանի) հետ հանդիպումից պարզեցի նաեւ, թե ինչպիսի կապ գոյություն ունի 1988-ին բուն անկախության գործընթացի եւ ազատագրական պայքարի մեջ ներգրավված անձերի եւ Արցախի երիտասարդության կրթության եւ զարգացման միջեւ: Այդ կապը մաս է կազմում ազգային ինքնությունը պահպանելու եւ հաջորդ սերնդին փոխանցելու գաղափարախոսությանը, որ նրանց ոտքի էր հանել 25 տարի առաջ:



Միացյալ Թագավորությունում երիտասարդների խնդիրները թողնված են ոչ կառավարական եւ բարեգործական կազմակերպությունների վրա... Ինձ համար հետաքրքրական էր իմանալ, որ Արցախում գործում է մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն, եւ այդ երկուսի կապակցված լինելը ցույց է տալիս, թե ինչպես է կառավարությունը պատշաճ ձեւով հետեւում երիտասարդների զարգացմանը: Նախարարության նպատակներից մեկն է «ապահովել նպաստավոր պայմաններ եւ հնարավորություններ աճող սերնդի ֆիզիկական, մտավոր, հոգեւոր եւ պրոֆեսիոնալ զարգացման համար»: Սա եզակի եւ կարեւոր նպատակ է Արցախի համար:

Սուսաննա Պետրոսյանի վերջերս հիմնած «Արցախի երիտասարդության զարգացման կենտրոնը» նույնպես հնարավորություն է ընձեռում, որ երիտասարդները ավելի լայն նպատակներ հետապնդեն՝ կառուցեն քաղաքացիական հասարակություն, կամուրջ կապեն աշխարհի հետ, խաղաղությունը պահպանեն եւ պրոֆեսիոնալ մակարդակ ապահովեն: Կենտրոնի վերջին շրջանի միջոցառումներից կարելի է առանձնացնել ֆրանսիացի ուսանողների այցը Արցախ, տեղեկատվական տեխնոլոգիաների վերաորակավորման դասընթացների ներդրումը, ուխտագնացությունը դեպի Սպիտակավոր եւ մայիսին բարոնուհի Քոքսի դիմավորումը: Վստահ եմ, այդ կենտրոնը հետզհետե ամրապնդվելու է, գործունեությունը ծավալվելու է ինչպես տեղական, այնպես էլ, համացանցի ընձեռած հնարավորությունների շնորհիվ, միջազգային ոլորտներում եւ դրանով իսկ կենտրոնի ձայնը ավելի լսելի է դառնալու:

Երիտասարդության խնդիրներով զբաղվողներին միավորել էր Շուշիի ազատագրման 20-ամյակի առթիվ կազմակերպված քայլարշավը, որին մասնակցեցին ոչ միայն վերոնշյալ կենտրոնի եւ Արցախի համալսարանի երիտասարդները, այլեւ Վրաստանից եւ Անգլիայից ժամանած հյուրեր: Ամբողջ միջոցառումը վառ ապացույց էր, որ երիտասարդությունը մասնակցում է անկախության գործընթացի եւ խորհրդանշական կապ է հաստատում այն երիտասարդների հետ, որոնք մարտնչեցին հանուն ազատագրման: Այդ առումով քայլարշավը, անցյալի հերոսական գործողությունների հիշատակումից բացի, նաեւ կոչ էր հանուն ապագայի, քանի որ այդ երիտասարդները, որոնք դեռ ծնված անգամ չէին, երբ պատերազմն սկսվեց, իրենց հայրերի պայքարի ժառանգորդներն են եւ վերջին հաշվով նաեւ պաշտպանները Արցախի անորոշ ճակատագրի: Այստեղ է երիտասարդության կարեւորությունը Արցախի համար:

**Թարգմ.՝ Հ. Ծ.**

## Միջազգային

# Զարաֆողլու. «Ղարաբաղի հարցում թուրք հասարակությունը որեւէ գիտելիք չունի», պետությունն էլ երկերեսանի է

Թուրքական հասարակությունը որեւէ գիտելիք չունի ղարաբաղյան խնդրի մասին, դրա մասին քննարկումներ շատ քիչ են պատահում Թուրքիայի երկերեսանի քաղաքականության պատճառով: Այսպիսին է թուրք հրատարակիչ, մարդու իրավունքների պաշտպան-ակտիվիստ **Ռագըփ Զարաֆողլուի** մոտեցումը «Թուրքական տեսակետը ղարաբաղյան հակամարտության շուրջը» հարցի առնչությամբ, որ երեկ քննարկվեց «Սիվիլիթասի» կազմակերպմամբ: Որպես բանախոս քննարկմանը մասնակցում էր նաեւ լրագրող, «Ղարաբաղյան օրագիր. կանաչ եւ սեւ» գրքի հեղինակ **Թաթուլ Հակոբյանը**: Ռագըփ Զարաֆողլուն նախկինում բազմիցս անդրադարձել է «հայկական հարցին», իսկ այժմ պատրաստակամություն է հայտնել Թուրքիայում հրատարակելու Թաթուլ Հակոբյանի գրքի թուրքերեն թարգմանությունը:




Զարաֆողլուն բերեց Կիպրոսի օրինակը, որի հարցում իբր անվտանգություն երաշխավորող Թուրքիան ինչ-որ պահի ռազմական ներխուժում իրականացրեց Կիպրոս՝ «պաշտպանելու կործանվող թուրքական փոքրամասնությանը», որի ինքնորոշման «իրավունքն» էլ հիմա Թուրքիան փորձում է պաշտպանել: Մինչդեռ Ղարաբաղի հարցում Թուրքիան չի խոսում ինքնորոշման իրավունքից, այլ սատարում է Ադրբեջանի տեսակետը: Ավելին, ըստ Զարաֆողլուի, սխալ այս քաղաքականությունը շարունակվում է նաեւ հայ-թուրքական ձեւաչափում, երբ ղարաբաղյան հարցի չկարգավորված լինելը պատճառ է բերվում հայ-թուրքական հաշտեցման համար:

Թաթուլ Հակոբյանի դիտարկմամբ՝ Ղարաբաղի հարցը թուրքական տեսանկյունից հայկական պահանջատիրության ինչ-որ փուլ է: Ըստ այդ նույն տրամաբանության, «հայերը պահանջում են Ղարաբաղը, վաղը կարող են պահանջել Նախիջեւանը, որի նկատմամբ Թուրքիան ավելի զգայուն է, վաղն էլ կպահանջեն Կարսը... Ղարաբաղի հարցը Թուրքիայի համար պատրվակ է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատելու համար»:

Որպես լրագրող Հակոբյանի շփումները իր թուրք գործընկերների հետ ցույց են տվել, որ Հայաստանի եւ Ղարաբաղի մասին նրանց պատկերացումները մակերեսային են, շատ դեպքերում չգիտեն անգամ, թե որտեղ է Ղարաբաղը: «Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ իրականում Հայաստանի հետ կապված բոլոր հարցերը տասներորդական տեղում են», ասաց լրագրողը, հիշեցնելով, որ վերջին տարվա ընթացքում ընդամենը երկու անգամ է Թուրքիայի արտաքին քաղաքականության գերատեսչությունը հատուկ հաղորդագրությամբ անդրադարձել Հայաստանին, որից մեկ անգամ շատ կոշտ բառապաշարով քննադատել է Ստեփանակերտում օդանավակայանի բացումը եւ նշել, որ այն «խարխլում» է բանակցային գործընթացը:

Թուրք իրավապաշտպանն էլ գտնում է, որ Ղարաբաղյան հարցը հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման համատեքստում զուտ պատճառաբանություն է, եւ հայ-թուրքական արձանագրությունների հարցում համաձայնության չգալու մեղավորը Թուրքիան է: «Այսօր Թուրքիայում աշխատում է մի մեծ ադրբեջանական լոբբի, սերտանում են ադրբեջանական եւ թուրքական բիզնեսի կապերը», վստահեցրեց Զարաֆողլուն, միեւնույն ժամանակ շեշտելով, որ Ղարաբաղի հարցում Թուրքիայի դիրքորոշումը նպաստում է ադրբեջանցիների սադրիչ գործելակերպին ու վտանգում անվտանգությունը մեր տարածաշրջանում:

«Թուրքիայում միակ հույսը քաղաքացիական հասարակությունն է, որ կարող է փոխել իրավիճակը, ինչը երկար ժամանակ է պահանջում», նշեց թուրք հրատարակիչը: Որպես օրինակ Զարաֆողլուն ներկայացրեց ապրիլի 24-ին Թուրքիայում իրականացվող միջոցառումները, որոնք թեեւ խորհրդանշական են, բայց «հալեցնում են սառույցը», ուստի այդ գործը շարունակվելու է: Զարաֆողլուի խոսքերով՝ «ԼՂ հարցի շուրջը պետք է ավելի լուրջ աշխատել, բացատրել հասարակությանը, որ այդ հարցը կապ չունի հայ-թուրքական հարցի հետ: Կարելի է համագործակցել նաեւ Ադրբեջանում գործող առաջատար կազմակերպությունների հետ, կարեւորն այն է, որ չպետք է հանձնվել»:

Վ.ՊՈՂՈՍՅԱՆ

*ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ*

# Հասան Ջեմալի «1915. Հայոց ցեղասպանությունը» գրքի շնորհանդեսը Բեռլինում

Հայտնի թուրք հրապարակախոս Հասան Ջեմալը երիտթուրք պարագլուխներից Ջեմալ փաշայի թոռն է: Անցյալ տարվա հոկտեմբերի լույս տեսած «1915. Հայոց ցեղասպանությունը» գիրքը լայն արձագանք էր գտել Թուրքիայում, դարձնելով միաժամանակ հեղինակին ազգայնական շրջանակների թիրախը:

«Զիհան» լրատվական գործակալության վկայությամբ, Հասան Ջեմալի «1915. Հայոց ցեղասպանությունը» գրքի շնորհանդեսը «Թուրքիան 21-րդ դարում» համալսարանական ծրագրի շրջանակում հունվարի 21-ին տեղի է ունեցել Բեռլինի «Հումբոլդտ» համալսարանում: Շնորհանդեսին հեղինակն ասել է, որ գրքի առնչությամբ մինչ այդ Թուրքիայում ոչ մի հայտարարություն չի արել որեւէ հեռուստատեսության կամ ռադիոյի, ոչ էլ հարցազրույց է տվել, գիրքը նվիրում է Հրանտ Դինքի հիշատակին: Յուրաքանչյուրը կարող է տարբեր տեսանկյունից մոտենալ Հայկական հարցին, կարեւորը, սակայն, ինչպես Դինքն էր մատնանշում, ոչ թե իրողության ուրացումը կամ հաստատումն է, այլ՝ ըմբռնումը»:

Հ. Չ.

# Աբբաս. «Սիոնիստները նացիստներին օգտագործել են Պաղեստինի գրավման համար»

Պաղեստինյան վարչակազմի նախագահ **Մահմուդ Աբբասը** լիբանանյան «Ալ Միադին» հեռուստաալիքին տված հարցազրույցում հայտարարել է, որ սիոնիստական շարժման առաջնորդները 2-րդ աշխարհամարտից առաջ կապեր են պահպանել գերմանացի նացիստների հետ:

Մահմուդ Աբբասը ընդգծել է, որ սիոնիստները նացիստներին հորդորում էին սպանել հրեաներին, քանի որ դա իրենց առիթ էր տալիս Պաղեստինը զավթելու համար:

Բացի դրանից, Աբբասը հայտարարել է, որ ինքը սիոնիստների եւ նացիստների կապերի վերաբերյալ բավականաչափ նյութեր ունի 70 գիրք գրելու համար: Նա կրկնել է անցյալում իր արած այն պնդումը, որ Հոլոքոստի տարիներին սպանված հրեաների թիվը չի անցնում 600 հազարից:

Աբբասը նաեւ հայտնել է, որ Իսրայելը փորձել է եւ դեռեւս փորձում է սպանել իրեն:

The Times of Israel թերթը այս կապակցությամբ մեջբերում է հարցազրույցի այն մասը, որ Իսրայելը համաձայնել է Սիրիայից պաղեստինցի 150 հազար փախստականների գալստյանը: Սակայն, Աբբասի խոսքերով, իսրայելական կողմը պահանջել է, որ նրանք գրավոր կերպով հրաժարվեն «կանաչ գոտի» վերադառնալու իրավունքից, ինչին պաղեստինցիները չէին կարող համաձայնել:



Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի դիվանատունը նշում է, որ Աբբասի հարցազրույցում շատ են անճշտությունները եւ որ Սիրիայից պաղեստինցի փախստականների գալստյան վերաբերյալ որեւէ պայմանավորվածություն չի եղել: «Խոսվել է միայն հարցի նախնական քննարկման մասին», ասվում է դիվանատան մեկնաբանության մեջ:

Մահմուդ Աբբասը ավարտել է Դամասկոսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը եւ Մոսկվայի Պատրիս Լումումբայի անվան համալսարանի ասպիրանտուրան: 1982-ին ԽՍՀՄ ԳԱ Արեւելագիտության ինստիտուտում թեկնածուական թեզ է պաշտպանել «Նացիզմի եւ սիոնիզմի գաղտնի կապը» թեմայով: Դրա հիման վրա գրել է «Ուրիշ դեմք. նացիստների եւ սիոնիստական շարժման ղեկավարության գաղտնի կապերը» մենագրությունը:

# Վատիկանը «ստվերային կայսրություն» է ստեղծել Մուսոլինիի փողերով

Լոնդոն այցելող զբոսաշրջիկները դժվար թե կռահեն, որ Նյու Բոնդ Սթրիթում գտնվող Bulgari ընկերության շենքը կապ ունի Հռոմի պապի հետ: Նույնը կարելի է ասել մոտակայքում գտնվող Altium Capital խոշոր ներդրումային բանկի կենտրոնակայանի մասին: Սակայն մայրաքաղաքի շքեղ շրջաններից մեկում կառուցված այդ շենքերը կապված են Վատիկանի առեւտրային անշարժ կայքի գաղտնի կայսրության հետ: Վատիկանը դրանք տնօրինում է դրածո ընկերությունների միջոցով: Դրանք ձեռք են բերվել 2006 թ. 15 մլն ֆունտով (24 մլն դոլարով): Իրավաբանական վերահսկողությունն իրականացնում է շվեյցարական ընկերություններից մեկը, որի սեփականատերը Վատիկանն է:



Նման գնումների համար Վատիկանը փող ձեռք բերեց Իտալիայում դեռ ֆաշիստական վարչակարգի տարիներին, գրում է Լոնդոնի «Գարդիան» թերթը:

1929 թ. Բենիտո Մուսոլինին եկեղեցուն խոշոր գումար փոխանցեց նրա աջակցությունը վայելելու ակնկալիքով: Վատիկանի խնայողությունները գնահատվում են 500 մլն ֆունտ (գրեթե 800 մլն դոլար): «Գարդիանի» տվյալներով, Վատիկանն այդ փողերով սեփականություն է ձեռք բերել ոչ միայն Լոնդոնի կենտրոնում, այլեւ Փարիզում եւ Շվեյցարիայում:

Altium Capital-ի շենքը պաշտոնապես համարվում է British Grolux Investments Ltd ընկերության սեփականությունը, որը Մեծ Բրիտանիայում ուրիշ անշարժ կայք եւս ունի: Իրական սեփականատիրոջ անունը որեւէ ձեւով չի հիշատակվում:

Սակայն լրագրողները պարզել են, որ բաժնետերերից երկուսը հայտնի բանկատերեր են, կաթոլիկներ, Barclays Bank-ի եւ Leopold Joseph mercant bank-ի ներկայացուցիչներ:

Արխիվների ուսումնասիրությունից հայտնի է դարձել, որ British Grolux Investments Ltd ընկերությունը 1999-ին իր սեփականությունը փոխանցել է British Grolux Ltd-ին եւ Cheylesmore Estates-ին: Այդ երկուսի բաժնետոմսերը Նյու Յորքի JP Morgan Bank-ում են: Դրանք վերահսկում է շվեյցարական Profina ՍՊԸ-ն, որը իր հերթին պատկանում է Վատիկանին:

Profina ընկերությունը Ֆրանսիայում, Շվեյցարիայում եւ Մեծ Բրիտանիայում ունի ակտիվներ, որոնք գնահատվում են 792 մլն դոլար:

# Հայտնի է Եվրոտեսիլի մասնակցի անունը




Շվեդիայի Մալմո քաղաքում մայիսի 14-ին եւ 16-ին տեղի կունենա Եվրոտեսիլի նախընտրական փուլը, իսկ 18-ին՝ եզրափակիչ երգի մրցույթը:

Ահա եւ հայտնի է Եվրոտեսիլ երգի մրցույթ 2013 հայաստանյան ներկայացուցչի անունը՝ «Դորիանս» խմբի մեներգիչ Գոռ Սուջյան:

«**Ազգի**» հետ զրույցում Եվրոտեսիլի պատվիրակության նախագահ **Գոհար Գասպարյանն** ասաց, որ «Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունն այս տարի հայաստանյան մասնակցի ներքին ընտրություն է կատարել: Մարտի 2-ին Առաջին ալիքի ուղիղ եթերում տեղի կունենա Եվրոտեսիլ երգի մրցույթի հայաստանյան ազգային ընտրությունը, որի ընթացքում գեղարվեստական հանձնաժողովի կողմից ընտրված մասնակիցը կկատարի մրցութային երգերը»:

Ինչպես նշված է Առաջին ալիքի պաշտոնական կայքում, երգի մրցույթին կարող են մասնակցել առնվազն 16 տարեկան ստեղծագործողները, քանի որ բեմում կարող են լինել ոչ ավել, քան 6 հոգի, ուստի երգի մեջ ձայնագրված ձայների քանակը կարող է լինել ոչ ավել քան 6-ը, մասնակցող երգը պետք է պաշտոնապես հրապարակված չլինի մինչեւ 01.10.2012-ը, ինչպես նաեւ երգի տեւողությունը չպետք է գերազանցի 3 րոպեն: Քաղաքական, գովազդային, վիրավորական եւ նմանատիպ այլ բնույթի խոսքերն ու բեմադրությունն անթույլատրելի են: Հայտերն ընդունվում են մինչեւ փետրվարի 20-ը:

Նշենք, որ օրերս Շվեդիայի Մալմո քաղաքում տեղի է ունեցել Եվրոտեսիլ 2013 երգի մրցույթի մասնակից երկրների տեղաբաշխման վիճակահանությունը:

Հայաստանը կներկայանա մայիսի 16-ին 2-րդ կիսաեզրափակչում Լատվիայի, Ադրբեջանի, Մալթայի, Իսլանդիայի, Սան Մարինոյի, Մակեդոնիայի, Ֆինլանդիայի, Բուլղարիայի, Իսրայելի, Նորվեգիայի, Ալբանիայի, Հունգարիայի, Շվեյցարիայի, Վրաստանի, Հունաստանի, Ռումինիայի հետ միասին, նշված է Եվրոտեսիլի պաշտոնական կայքում:

Այս տարի Եվրոտեսիլ երգի մրցույթի խորհրդանիշը թիթեռն է, իսկ նշանաբանը «We Are One»:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# Մրցանակաբաշխություն՝ նվիրված Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակին

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս, մարտի 27-ին՝ թատրոնի միջազգային օրը, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա ՀԹԳՄ «Արտավազդ» ամենամյա մրցանակաբաշխությունը: Այս տարի այն նվիրվելու է մեր հանճարեղ դերասան Վահրամ Փափազյանի ծննդյան 125-ամյակին: «**Ազգի**» հետ զրույցում մրցանակաբաշխության մամուլի խոսնակ **Վլադ Մուրադյանն** ասաց, որ հայտերը թատրոններից եւ թատերախմբերից ընդունվում են մինչեւ մարտի 1-ը. «ՀԹԳՄ «Արտավազդ» ամենամյա մրցանակները շնորհվում են մրցանակաբաշխության նախորդ տարվա մարտի 1-ից մինչեւ մրցանակաբաշխության տարվա մարտի 1-ը ընկած ժամանակահատվածում՝



առավել աչքի ընկած թատերական աշխատանքներին: Մրցանակաբաշխության համար կազմվում է 7 հոգուց բաղկացած փորձագետների խումբ»:

«Արտավազդ» մրցանակ տրվում է հետեւյալ անվանակարգերում՝ թատերարվեստին արժանապատիվ ծառայության համար, լավագույն կին եւ տղամարդ դերակատար, երկրորդ պլանի լավագույն կին եւ տղամարդ դերակատար, լավագույն ռեժիսուրա, լավագույն սցենոգրաֆիա, երաժշտական լավագույն ձեւավորման հեղինակ, լավագույն պիես, լավագույն երիտասարդ դերասան-դերասանուհի, լավագույն երիտասարդ բեմադրիչ, լավագույն երիտասարդական ներկայացում եւ լավագույն ներկայացում:

Վլադ Մուրադյանն «**Ազգին**» հայտնեց նաեւ, որ «Արտավազդ» մրցանակաբաշխության փորձագետների խմբի անդամներն են Դավիթ Մուրադյանը, Սուրեն Հասմիկյանը, Հրաչյա Գասպարյանը, Լեւոն Մութաֆյանը, Ռուզաննա Առաքելյանը, Նվարդ Ասատրյանը եւ Նարինե Գրիգորյանը:

**Մ. Հ.**

VIVACELL MTS

Р²Ъо²р²рафВЪафЬ

Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը ս.թ. հունվարի 23-ին, ժամը 19:00-ին, հատուկ ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների համար կազմակերպել է դասական երաժշտության երեկո: Համերգը կկայանա Արամ Խաչատրյան համերգասրահում:

Սիրով հրավիրում ենք Ձեզ՝ միասին վայելելու դասական երաժշտության հաճելի երեկոն:




## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Հայտարարություն

### Համաժամանակյա թարգմանչական համակարգի ձեռքբերման մրցույթի

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) հրավիրում է բոլոր հետաքրքրված կազմակերպությունների մասնակցելու համալսարանի համար համաժամանակյա թարգմանչական համակարգի գնման նպատակով անցկացվող մրցույթին: Համաժամանակյա թարգմանչական համակարգի անհրաժեշտ տեխնիկական բնութագրերի, քանակի, գնման եւ առաքման պայմանների, երաշխիքային սպասարկման պահանջների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաթեթը ստանալու նպատակով կարող եք դիմել ՀԱՀ, Մարշալ Բաղրամյան պողոտա 40 հասցեով (հեռ. 51 27 25, Լուսինե Գիգոյանին): Մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետն է հունվարի 30-ը, ժամը 16-ը:

### Հայաստանի Դեմոկրատական կուսակցության 2012 թվականի ֆինանսական հաշվետվություն

| | |
|---|---|
| Նախորդ տարվանից առաջացած մնացորդը | 2828դր.. |
| Անդամավճարներից մուտքերը | 514436դր. |
| Ֆիզիկական անձանց նվիրատվություններ | 8710000դր. |
| ԾԱԽՍԵՐԸ | |
| Աշխատավարձ | 391440դր. |
| Սոց.վճարներ | 1314130դր. |
| ՀՀ ազգային ժողովի ընտրությունների կազմակերպչական ծախսեր | 8672000դր |
| Այլ ծախսեր | 30904դր. |
| Ընդամենը ծախսեր | 9225774դր. |
| Մնացորդ 31.12.2012թ. դրությամբ | 1490դր. |

*ՀԴԿ նախագահ* *Ա.Սարգսյան*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացնելու նպատակով հայտարարում է աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ:

Մրցույթն անց է կացվելու 2013թ. մարտի 12-ից ապրիլի 12-ը:

Մրցույթի հայտերն ընդունվելու են 2013թ. փետրվարի 1-ից մարտի 4-ը (ներառյալ), յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ը՝ ք. Երևան, Բայրոնի 1 հասցեում:

**Ֆինանսատնտեսական գործունեության իրականացնող աուդիտորական կազմակերպության հավակնորդները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին.**

◆ Բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման 5 տարվա փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և http://firm-rankings vrlfinancial-news com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),

◆ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 Բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական),

◆ աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

◆ Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

**Վերոնշյալ չափանիշներին բավարարող հավակնորդները պետք է Բանկ ներկայացնեն իրենց հայտերը՝ հետևյալ բովանդակությամբ.**

◆ հավակնորդի տվյալները՝ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը

◆ հավակնորդի լիցենզիայի ռեկվիզիտները.

◆ հավակնորդի կողմից աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ

◆ համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և http://firm-rankings vrlfinancial-news com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն10 աուդիտորական կազմակերպությունների ցանկի մեջ մտնելու մասին տեղեկություն.

◆ աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ

◆ պատասխանատու աուդիտորի աշխատանքային փորձի մասին տեղեկություն:

**Հայտերին կից պետք է ներկայացվեն.**

◆ աուդիտորական կազմակերպության լիցենզիայի պատճենը.

◆ պատասխանատու աուդիտորի միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի (վկայականի) պատճենը.

◆ աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթերի (վկայականների) պատճենները կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորումը հաստատող փաստաթղթերի (վկայականների) պատճենները.

◆ աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը.

◆ աուդիտորական ծառայությունների համար գնառաջարկը:

Բանկը սույն հայտարարության մեջ նշված չափանիշներին բավարարող հավակնորդների ցանկից ՀՀ օրենսդրությամբ և իր ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ընտրում է արտաքին աուդիտին, որից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս հետ կնքում է աուդիտորական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր: Պայմանագրի համաձայն Արտաքին աուդիտը պարտավորվում է Բանկի առաջադրանքով 2012թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով իրականացնել աուդիտորական գործունեություն, իսկ Բանկը պարտավորվում է վճարել դրա դիմաց: Այն դեպքում, երբ Բանկի կողմից ընտրված հավակնորդը կհրաժարվի Բանկի հետ կնքել պայմանագիր, վերջինս Բանկի իրական վնասները փոխհատուցելու համար պարտավորություն կստանձնի:

Սույն հայտարարությունը հանդիսանում է օֆերտա անելու հրավեր, իսկ հավակնորդների կողմից ներկայացված հայտերը հանդիսանում են օֆերտա Բանկին:

***«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ***
***հասցե՝ 0009, ք.Երևան, Բայրոնի 1***
***Հեռախոս՝ (374-10) 31-88-88***
***Հեռապատճեն՝ (374-10) 54-34-85***
***Էլ.-փոստ՝ acba@acba.am***
***Կայք՝ http://www.acba.am***

### Քաղաքակրթությունների երկխոսություն ազգային կենտրոնի 2012 թվականի ֆինանսական հաշվետվություն

| | |
|---|---|
| Նախորդ տարվանից առաջացած մնացորդը | 911դր. |
| Մուտքեր /նվիրատվություն/ | 577875դր. |
| ԾԱԽՍԵՐ | |
| Աշխատավարձ | 388525դր. |
| Սոց.վճար | 129235դր. |
| Այլ /թերթեր/ | 60000դր. |
| Ընդամենը | 577760դր. |
| Մնացորդ 31.12.2012թ.դրությամբ | 1026դր. |

«Քաղաքակրթությունների երկխոսություն» ազգային կենտրոն ՀԿ

*Խորհրդի նախագահ* *Ա.Սարգսյան*

# Առաջատար եռյակը պահպանեց դիրքերը

*Սերգեյ Մովսիսյանը գլխավորեց B խմբի մրցաշարի աղյուսակը*

Մեկօրյա հանգստից հետո շախմատի Վեյք Ան Զեեի մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջ՝ անցկացնելով 9-րդ տուրի հանդիպումները, որոնք չսասանեցին առաջատար եռյակի դիրքերը: Լեւոն Արոնյանը սեւերով մրցեց Էրվին Լ Ամիի հետ: 66-րդ քայլին մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին:

Ընդհանրապես 9-րդ տուրն առատ էր ոչ-ոքիներով: Հաշտություն կնքեցին նաեւ Պետեր Լեկոն ու Վիշվանաթան Անանդը, Սերգեյ Կարյակինն ու Պենտալա Հարիկրիշնան, Հիկարու Նակամուրան ու Անիշ Գիրին, Վան Հաոն ու Ֆաբիանո Կարուանան:



Արդյունավետ 2 պարտիաներից մեկն իր օգտին գրանցեց մրցաշարի միանձնյա առաջատար Մագնուս Կառլսենը, որը սեւերով պարտության մատնեց աշխարհի նախկին չեմպիոնուհի Հոու Յիֆանին: Այս հաղթանակից հետո Կառլսենը վաստակեց 7 միավոր ու ավելի ամրապնդեց առաջատարի դիրքը: 6 միավորով նրան հետապնդում է Վիշվանաթան Անանդը, որին հաջորդում են 5,5-ական միավոր ունեցող Լեւոն Արոնյանը եւ Հիկարու Նակամուրան: Տուրի մյուս հաղթանակը գրանցվեց Լյուկ վան Վելիի օգտին Իվան Սոկոլովի հետ մրցախաղում:

Այսօր կայանալիք 10-րդ տուրում Արոնյանը սպիտակներով կխաղա Վան Հաոյի հետ, իսկ Կառլսենի մրցակիցը կլինի Լ Ամին:

B խմբի մրցաշարում հաջող է հանդես գալիս Սերգեյ Մովսիսյանը: 9-րդ տուրում հայ շախմատիստը սեւերով 46-րդ քայլին պարտության մատնելով Մաքսիմ Տուրովին, 6,5 միավորով միանձնյա գլխավորեց մրցաշարային աղյուսակը: 6-ական միավորով Մովսիսյանին հետապնդում են Ռիխարդ Ռապորտն ու Արկադի Նայդիչը: Ռապորտը ոչ-ոքի խաղաց Նիլս Գրանդելիուսի հետ, իսկ Նայդիչը հաղթեց Յան Թիմանին: 10-րդ տուրում Մովսիսյանը կխաղա Դանիլ Դուբովի հետ, որն ունի 5,5 միավոր: Վերջինս հաղթեց Սիպկե Էռնսին:

C խմբի մրցաշարում բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հաղթեց Լիզա Շութին ու վաստակեց 5 միավոր: Աղյուսակը 7,5 միավորով գլխավորում է Սաբինո Բրունելոն, որը հաղթեց Սթեյն Գրեթարսոնին:

# Արտյոմ Խաչատուրովին հրավիրել են Մոլդովայի ազգային հավաքական

Ըստ մոլդովական լրատվամիջոցների, ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի թեկնածու, «Շերիֆի» պաշտպան Արտյոմ Խաչատուրովն ընդգրկվել է Մոլդովայի ազգային հավաքականի ընդլայնված կազմում, որը նախապատրաստվելու է Ղազախստանի ընտրանու հետ կայանալիք ընկերական հանդիպմանը:

Հայկական ծագում ունեցող Արտյոմ Խաչատուրովը Մոլդովայի քաղաքացի է ու հանդես է եկել երկրի երիտասարդական հավաքականում: Անցած տարվա աշնանը նա ցանկություն էր հայտնել հանդես գալու Հայաստանի ազգային հավաքականում, ուստի դիմել էր ՖԻՖԱ թույլտվություն ստանալու: ՖԻՖԱ-ից առայժմ այդ հարցով որեւէ պատասխան չի ստացվել:



Moldfootball. com կայքին Խաչատուրովի գործակալ Խորեն Քալաշյանը հայտնել է, որ ֆուտբոլիստը չի կարող հրավիրվել Մոլդովայի հավաքական: Ըստ ՖԻՖԱ-ի գործող կարգի, եթե ֆուտբոլիստը դիմում է այլ երկրի հավաքականում հանդես գալու խնդրանքով, ապա մինչեւ ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի որոշումը նա իրավունք չունի խաղալու որեւէ հավաքականում: ՖԻՖԱ-ն դեռեւս քննում է Խաչատուրովի հարցը եւ մոտ օրերս պետք է որոշում կայացնի:

Հիշեցնենք, որ նոյեմբերին ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը Խաչատուրովին հրավիրել էր մասնակցելու Երեւանում Լիտվայի ընտրանու հետ կայացած խաղին: Սակայն փաստաթղթերի ձեւակերպման հետ կապված խնդիրների պատճառով ֆուտբոլիստը Երեւան չէր ժամանել:

# Շարապովան շարունակում է հաղթարշավը

Ռուսաստանցի Մարիա Շարապովան շարունակում է հաղթարշավը թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունում: Քառորդ եզրափակիչում նա 6-2, 6-2 հաշվով պարտության մատնեց իր հայրենակցուհի Եկատերինա Մակարովային: Կիսաեզրափակիչում Շարապովայի մրցակցուհին կլինի չինացի թենիսիստուհի Լի Նան, որը 7-5, 6-3 հաշվով պարտության էր մատնել լեհ Ագնեշկա Ռադվանսկային:

Մարիա Շարապովան Ավստրալիայի բաց առաջնությունների նոր ռեկորդի հեղինակ դարձավ: Մինչեւ քառորդ եզրափակիչ փուլ հասնելը նա միայն 5 միավոր էր զիջել իր մրցակցուհիներին: Նախկին ռեկորդակիրներն էին Շտեֆի Գրաֆն ու Մոնիկա Սելեշը: 1988-ին Գրաֆը միայն 8 միավոր էր զիջել մրցակցուհիներին: 1991 եւ 1993-ին այդ ցուցանիշը հաջողվեց կրկնել Մոնիկա Սելեշին:

Հիշեցնենք, որ մինչեւ քառորդ եզրափակիչ մտնելը, Մարիա Շարապովան հաջորդաբար պայքարից դուրս էր մղել Օլգա Պուչկովային (6-0, 6-0), Միսակի Դոին (6-0, 6-0), Վինուս Ուիլյամսին (6-1, 6-3) եւ Կիրստեն Ֆլիպկենսին (6-1, 6-0): Տղամարդկանց մրցաշարում առաջինը կիսաեզրափակիչի ուղեգիր նվաճեց իսպանացի Դավիթ Ֆեռերը: Նրանից 5 խաղափուլ պահանջվեց իր հայրենակից Նիկոլաս Ալմագրոյին հաղթելու համար (4-6, 4-6, 7-5, 7-6, 6-2): Ընդ որում առաջին 2 խաղափուլերից հետո Ֆեռերը մրցակցին զիջում էր 0-2 հաշվով, սակայն ի վերջո կարողացավ կամային հաղթանակ տոնել:

Կիսաեզրափակիչում Ֆեռերի մրցակիցը կլինի սերբ Նովակ Ջոկովիչը, որը 4 խաղափուլում առավելության հասավ չեխ Թոմաս Բերդիխի նկատմամբ (6-1, 4-6, 6-1, 6-4):

ՆՎԱՃՈՒՄ

# Սուրեն Աղաբեկյանի ռեկորդը կգրանցվի «Դյուցազնագրքում»

Հայկական «Դյուցազնագրքում» նոր նվաճում կգրանցվի: Օրերս Մալաթիա-Սեբաստիա համայնքի մանկապատանեկան համալիր մարզադպրոցում տեղի ունեցավ նոր ռեկորդի սահմանման միջոցառումը: Սուրեն Աղաբեկյանը ձախ ձեռքի ճկույթով բարձրացրեց (պոկում վարժություն) 110 կգ: Դա 5,5 կգ-ով գերազանցում է համաշխարհային նախկին ռեկորդը, որը պատկանում էր նորվեգացի Քրիստիան Հոլմին: Վերջինս այդ ռեկորդը սահմանել էր 2008-ին: Այն գրանցված է Գինեսի ռեկորդների գրքում:

Սուրեն Աղաբեկյանի նվաճումը հաստատող տեսանյութն ու անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկվելու են Լոնդոնում գտնվող Գինեսի ռեկորդների գրքի գրասենյակ: Սուրենը զբաղվում է ձյուդոյով, սովորում է Երեւանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության բաժնի մագիստրատուրայում: Նա մտադիր չէ բավարարվել ձեռքբերածով ու աշխատելու է բարելավել իր ռեկորդը, ինչպես նաեւ համաշխարհային նոր ռեկորդ սահմանել մատնեմատով:

# Յուրա Մովսիսյանը մարզվում է անհատական ծրագրով



Մոսկվայի «Սպարտակը», որի կազմում այս տարի հանդես կգա ՀՀ ազգային հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը, հունվարի 21-ից վերսկսել է մարզումները: Յուրան իր թիմակիցների հետ մասնակցել է թիմի առաջին մարզմանը: Մովսիսյանն արձակուրդին մեկնել էր ԱՄՆ, որտեղից կնոջ եւ եղբոր ընտանիքի հետ ուղեւորվել էր Մեքսիկա՝ հանգստանալու: Հունվարի 19-ին նա վերադարձել էր Մոսկվա:

Առայժմ Յուրա Մովսիսյանը մարզվում է անհատական ծրագրով: Ճիշտ է, վնասվածքից հետո նա արդեն ապաքինվել է, սակայն առայժմ բժիշկները խորհուրդ չեն տալիս Մովսիսյանին ամբողջ ծանրաբեռնվածությամբ մարզվելու: Բժշկական զննումը ցույց է տվել, որ վնասվածքից ապաքինման հարցում զգալի առաջընթաց կա: Շուտով թիմը կմեկնի Արաբական Միացյալ Էմիրություններ, որտեղ արդեն Մովսիսյանը կմարզվի ողջ ծանրաբեռնվածությամբ ու կմասնակցի ստուգողական հանդիպումներին:

# Լյուքսեմբուրգի հետ խաղում նոր ֆուտբոլիստներ կփորձարկվեն

Ինչպես հայտնի է, փետրվարի 5-ին Հայաստանի ազգային հավաքականը Ֆրանսիայի Վալանս քաղաքում ստուգողական հանդիպում է անցկացնելու Լյուքսեմբուրգի ընտրանու հետ: ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը մտադիր է այդ խաղում նոր ֆուտբոլիստներ փորձարկել: Արդեն հայտնի է դարձել, որ հավաքականից պաշտոնապես հրավեր են ստացել Ուրուգվայի «Ֆենիքսում» հանդես եկող Մաուրո Գեւորգյանը եւ «Ուֆայի» ֆուտբոլիստ Միխայիլ Մարկոսովը:

Հարձակվող Միխայիլ Մարկոսովը ՌԴ առաջնության առաջին խմբում արդյունավետ խաղ է ցուցադրում: Նա «Ուֆայի» լավագույն ռմբարկուն է: Մարկոսովն առաջին շրջանում 9 գոլի հեղինակ է դարձել: Ներկայումս «Ուֆան» ուսումնամարզական հավաք է անցկացնում Թուրքիայում: Արդյունավետությամբ աչքի է ընկնում նաեւ Մաուրո Գեւորգյանը, որը ժամանակին մի քանի խաղ է անցկացրել «Փյունիկի» կազմում:

# «Ուրարտուն» փորձարկում է ուժերը

Բոլորովին վերջերս կազմավորված «Ուրարտու» ֆուտբոլային ակումբի թիմը շարունակում է փորձարկումները: Երեկ նորաստեղծ թիմը «Բանանցի» մարզադպրոցի արհեստական խոտածածկով մարզադաշտում ստուգողական խաղում ուժերը չափեց բարձրագույն խմբի առաջնության մասնակից Դիլիջանի «Իմպուլսի» հետ: Արմեն Սանամյանի սաները ուժեղ մրցակցի հետ խաղում հասան պատվավոր ոչ-ոքի արդյունքի՝ 2-2: «Իմպուլսի» կազմում աչքի ընկան առաջնության լավագույն ռմբարկու Նորայր Գյոզալյանն ու Հայկ Ոսկանյանը: «Ուրարտուից» գոլերը խփեցին Սեւադա Կարապետյանն ու Ռազմիկ Հովհաննիսյանը:

Հիշեցնենք, որ մինչեւ «Իմպուլսի» հետ մրցելը, «Ուրարտուն» ստուգողական խաղում 2-0 հաշվով հաղթել էր «Արարատ-2-ին»:

# Մխիթարյանի հերթական գոլը

Դոնեցկի «Շախտյորն» ավարտեց ուսումնամարզական առաջին հավաքն Արաբական Միացյալ Էմիրություններում: Երեկ ստուգողական վերջին խաղում «Շախտյորը» Դուբայում 3-1 հաշվով պարտության մատնեց Սանկտ Պետերբուրգի «Զենիթին»: «Շախտյորի» 2-րդ գոլի հեղինակը Հենրիխ Մխիթարյանն էր, որը մենմենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, նրա գլխավերեւով գնդակն ուղարկեց դարպասը: Դա ընկերական խաղերում Հենրիխի 3-րդ գոլն էր: ԱՄԷ-ում անցկացրած 5 հանդիպումներից 4-ում ուկրաինական թիմը հաղթել է, մեկում պարտվել է:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

